

Դիլբարյան Աննա Համլետի

Ծնվել է 05.11.1987թ. քաղաք Սպիտակում: 2004-2008թթ. սովորել է Երևան պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում: 2008-2010թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում և ստացել է մագիստրոսի կոչում: 07.01.2008-10.01.2011թթ. աշխատել է «Դայլոգ Ինվեստ» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան: 2010թ. ՀՀ փաստաբանների պալատի կողմից ստացել է փաստաբանի արտոնագիր: 03.10.2011-31.08.2012թթ. աշխատել է «Արտ-Լար Ֆինանս Ընդ Քքաունթինգ» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան: 02.04.2013-06.09.2013թթ. աշխատել է «Ունիվերսալ Բիզնես Սոլուշնս» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան: 10.09.2013-08.01.2014թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես փորձագետ: 08.01.2014-06.06.2014թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնի պետ: 29.05.2014թ. շնորհվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: 17.06.2014-28.11.2014թթ. գրանցված է եղել ՀՀ քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում: 09.12.2014 - 01.02.2019թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 29.05.2015թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: 04.02.2019-10.10.2019թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար: 11.10.2019թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչությունում՝ որպես Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնի պետ: Ամուսնացած չէ:



Բոյաջյան Լուսինե Արտաշի

Ծնվել է 01.09.1984թ. ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գյուղում: 1991-2001թթ. սովորել և ավարտել է Շիրակի մարզի Փանիկ գյուղի միջնակարգ դպրոցը: 2001-2005թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան: 2005-2007թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում և ստացել մագիստրոսի կոչում: 10.12.2007-06.08.2008թթ. աշխատել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 01.11.2010-21.02.2011թթ. աշխատել է «Ալիբի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում՝ որպես իրավաբան: 29.01.2013թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր /թիվ 1614/, որի գործողությունը կասեցված է: 22.02.2011թ.-ից առ այսօր աշխատում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Սաղոյան Լիլիթ Ալեքսանդրի



Ծնվել է 07.06.1989թ. Երևան քաղաքում: 2006թ. գերազանցությամբ ավարտել է Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը: 2006-2010թթ. գերազանցությամբ ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանը՝ ստանալով բակալավրի աստիճան: 2010-2012թթ. գերազանցությամբ ավարտել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանը՝ ստանալով մագիստրոսի աստիճան: 01.07.2010-25.10.2010թթ. աշխատել է «Բեստակո-Նաիրի» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 19.10.2010-01.05.2013թթ. աշխատել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի և Քաղաքականության ինստիտուտի Միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնում՝ որպես լաբորանտ: 20.05.2013-17.02.2015թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 17.02.2015թ. փետրվարի 17-ից աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական (պաշտոնների անվանացանկում կատարված փոփոխության արդյունքում պաշտոնի անվանումից հանվել է «ավագ» բառը (հիմք՝ Բարձրագույն դատական խորհրդի 25.03.2019թ. թիվ ԲԴԽ-18-Ո-62 որոշում): Տիրապետում է հայերեն (մայրենի լեզու), ռուսերեն (գերազանց), ֆրանսերեն (միջանկյալ տիրապետում), անգլերեն (տարրական տիրապետում) լեզուներին: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Դավթյան Կարինե Արմանի

Ծնվել է 16.08.1991թ. Էջմիածին քաղաքում: 2008թ. ավարտել է Էջմիածին քաղաքի Մ.Գորկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը: 2008-2012թթ. սովորել և ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ստանալով ‹‹Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի որակավորում: 2012-2014թթ. գերազանցությամբ ավարտել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի մագիստրատուրան, ստանալով «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան: 2014թ. ավարտել է ՀՀ փաստաբանական դպրոցը՝ ստանալով փաստաբանական գործունեության արտոնագիր: 13.06.2014-02.10.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 03.10.2018-28.02.2019թթ. աշխատել է ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ որպես իրավաբանական վարչության դատահիրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ: ՀՀ պաշտպանության նախարարի 25.12.2018թ. հրամանով՝ շնորհվել է քաղաքացիական հատուկ ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: 2019 թվականի մարտի 7-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Հանդիսանում է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ: Տիրապետում է երկու օտար լեզուների՝ ռուսերեն և անգլերեն: Ամուսնացած է, ունի մեկ որդի:



Մուրադյան Հերմինե Նորիկի

Ծնվել է 12.09.1985թ. Երևան քաղաքում: 2002թ. ավարտել է Երևանի թիվ 94 միջնակարգ դպրոցը: 2007թ. ավարտել է Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտը: 18.06.2009-03.03.2010թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանի դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնում: 03.03.2010-05.12.2013թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: 05.12.2013-05.05.2014թթ. աշխատել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: 12.05.2016-03.04.2018թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի ավագ օգնականի պաշտոնում: 20.04.2018 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի օգնականի պաշտոնում: 06.09.2010թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: Տիրապետում է հայերեն /գերազանց/, անգլերեն /լավ/ և ռուսերեն /լավ/ լեզուներին: Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Հովհաննիսյան Սարգիս Մելսիկի

Ծնվել է 08.01.1989թ. Երևան քաղաքում: 2006թ. ավարտել է Երևանի Հակոբ Օշականի անվան թիվ 172 միջնակարգ դպրոցը: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև կնքված միջպետական պայմանագրի շրջանակներում 2006-2007թթ. սովորել է Մոսկվա քաղաքի Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի (Российский государственный социальный университет) իրավագիտության ֆակուլտետում: Այնուհետև, 2007թ. տեղափոխվել և մինչև 2010 թվականը սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: 2010-2012թթ. անցել է ժամկետային զինվորական ծառայության՝ ՀՀ ՊՆ և ԼՂՀ ՊԲ Հադրութի շրջանի զորամասերում: Ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ԼՂՀ ՊԲ հրամանատար Մովսես Հակոբյանի կողմից բարեխիղճ ծառայության, ենթակաների ուսուցման և դաստիարակության գործում ունեցած հաջողությունների համար 2011թ. պարգևատրվել է պատվոգրով, իսկ ԼՂՀ ՊԲ Հադրութի զորամասի հրամանատարի 29.08.2011թ. հրամանով պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» կրծքանշանով: 2012-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2013թ. հունվարի 17-ից մինչև հուլիսի 18-ը աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետության գույքային շահերի պաշտպանության և գանձումների սպասարկման բաժնում՝ որպես փորձագետ: 2013թ. սեպտեմբերի 13-ից մինչև 2018թ. նոյեմբերի 1-ը աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կենտրոնական մարմնում: 13.09.2013-20.01.2014թթ. աշխատել է որպես ՀՀ դատական դեպարտամենտի Կազմակերպաիրավական վարչության կրտսեր մասնագետ, 20.01.2014-09.04.2015թթ.՝ որպես Կազմակերպաիրավական վարչության մասնագետ, 2015թ. ապրիլի 9-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ որպես Կազմակերպաիրավական վարչության ավագ մասնագետ, 2015թ. հոկտեմբերի 5-ից մինչև 2018թ. նոյեմբերի 1-ը՝ որպես ՀՀ դատական դեպարտամենտի Իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնի ավագ մասնագետ: Միաժամանակ, ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար 2017թ. դեկտեմբերի 28-ին շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան: 2018թ. նոյեմբերի 1-ից մինչև 2019թ. մարտի 20-ը աշխատել է որպես Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնի պետ: 2019 թվականի հունիսի 26-ից հանդիսանում է Վարչապետի աշխատակազմի «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավաբանը: Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին: Ամուսնացած չէ:



Հախվերդյան Վահե Մայիսի

Ծնվել է 17.02.1985 թ. Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղում: 2002-2008 թթ. սովորել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետում՝ ստանալով պատմություն /իրավունքի հիմունքներ/ մանկավարժության բակալավրի աստիճան: 2003-2005թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում: 2008-2010թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 01.01.2012-26.11.2012թթ. աշխատել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ: 30.11.2012թ-ից առ այսօր աշխատում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Պետրոսյան Սուրեն Ամբաիու

Ծնվել է 16.10.1986թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում: 2003-2008թթ. սովորել և ավարտել է «Հայաստանում Ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: 2008-2010թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2010-2012թթ. պարտադիր զինվորական ծառայություն է անցել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերում: 2012-2014թթ. գերազանցությամբ ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի կառավարման ֆակուլտետի բակալավրիատը՝ ստանալով տնտեսագետ-մենեջերի բակալավրի աստիճան: 02.02.2009-27.05.2009թթ. աշխատել է «Միքս Փեյնտս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 02.05.2009-31.05.2010թթ. աշխատել է «Գինափ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 15.03.2013թ. նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության հետաքննիչ և աշխատել մինչև 18.11.2013 թվականը: 24.03.2014-02.03.2015թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ դատավորի օգնականի պաշտոնում: 02.03.2015թ. առ այսօր աշխատում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Կյուրեղյան Էդգար Անդրանիկի

Ծնվել է 02.09.1987թ. Երևան քաղաքում: 2004 թվականին ավարտել է Երևան քաղաքի Շավարշ Սիմոնյանի անվան թիվ 112 միջնակարգ դպրոցը: 2004-2008թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը: 2006-2008թթ. նույն բարձրագույն ուսումնական հաստատությունում ստացել է լրացուցիչ կրթություն՝ իրավունքի հիմունքներ մասնագիտությամբ: 2008-2010թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի մագիստրատուրան: 2011-2014թթ. սովորել և ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2014-2016թթ. սովորել և ավարտել է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 2011թ. նշանակվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի աշխատակազմի գրասենյակի գործավարի պաշտոնում: 18.02.2014թ. նշանակվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատավորի գործավարի պաշտոնում: 01.07.2014թ. առ այսօր աշխատում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատավորի օգնականի պաշտոնում: 2017թ. որպես խրախուսանք, շնորհվել է զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր՝ ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: Ամուսնացած չէ: